№ 134 Յուլիսի 27 Երեքշաբթի 1882 Յուլիսի 27 Երեքշաբթի № 134

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Քութայիսից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Եգիպտական հարց։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Աւստրիայից։ Արտաքին լուրեր — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մի առաջարկութիւն Բագուի «Մարդասիրական ընկերութեան» անդամներին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

—

Յուլիսի 23-ին

Այս տարի Իմէրէթի բոլոր շրջականները պատժվեցան բնութիւնից։ Ահա արդէն երկու ամիս է լրանում, որ անձրև չենք տեսել։ Կիզիչ արեը ամենայն ինչ չորացրեց. խեղճ երկրագործ գիւղացին ձեռները ծալած, տխուր և թուլացած նստած է իր արտի ծայրին։ Այդ ողբերգական դրութեան մէջ երկրագործը մի փոքրիկ ամպ կը տեսնէ թէ չէ, զանազան սուրբերին իսկոյն մատաղ է խոստանում։ Մի խօսքով գիւղ չէ մնացել որ իր սրբերին մատաղ արած չը լինի, իսկ սրբոց մասունքները ամէն օր բացվում են, անդադար լըսվում է գիւղացու լացը։ Սիմինդրը, առանց որի իմէրէթը չէ կարող ապրել, բոլորովին չորացած է։ Նամանաւանդ յայտնի է, որ Իմէրէթի մեծագոյն մասը չէ ջրվում։

Մրգերն էլ այս տարի շատ պակաս են. Իմէրէթ գիւղացին միրգը չորացնում է և ձմեռն է գործածում, որպէս կերակուրներից մէկը։ Ամէն օր, երեկոյեան ժամանակ հեռուից տեսնում ենք թուխ-թուխ ամպերը լող տալիս դէպի մեզ, և ահա սկսում ենք գուշակել որ այս գիշերը անշուշտ անձրև կը գայ, բայց յանկարծ կը փչէ արևելեան խեղդող ջերմ քամին և իսկոյն կը ցրէ բոլորը։ Ափսոս, այնքան յոյսերը և նախագուշակութիւնները ունայն կանցնեն։ Ստուերի տակը Ռէօմիւրի ջերմաչափով 28 մինչև 30 աստիճան է։ Մէկ խօսքով եթէ այս շաբաթը չը թրջվի գետինը, վայն եկած է մեր գլխին։ Անտանելի չոքից գիւղացիք չեն կարողանում կենսական միւս մթերքը բերել քաղաքը, այնպէս որ սիմինդրի պուդը 1 ր. 80 կ. արժէ, հաւը 80 կ., երկու ձու 5 կ.։

Մի այլ պատուհաս էլ եկաւ մեր գլուխը. երկու շաբաթ է արդէն որ շրջակայ անտառները այրվում են, այն է՝ Բաճայի անտառները, որոնք 60 վերստ հեռու են Քութայիսից և Սաղօրիա անտառը, որը ձգվում է Քութայիսի և Ռիոնի իջևանների մէջ։ Ուրեմն ոչ թէ ուտեստը կը թանգանայ այս կողմերը, այլ և շինութեան ատաղձը և այրելու փայտը։ Ծերերը պատմում են որ այս կողմերը այսպիսի ջերմ եղանակ չեն տեսած։ Փոքր ինչ էլի յոյս կայ ձմրացան արտերից. տեսնենք ինչ կը լինի։

Ահալի է որ մի այլ պատուհաս էլ չը գայ մեր գլուխը. յայտնի է որ այսպիսի երաշտ եղանակից յետոյ, երբ գետինը թրջվում է, զանազան էպիդիմիականախտերը շատանում են, ուստի կը խնդրեմ պ. պ. բժշկներից, որ կանխաւ լրագրով յայտնեն կարճօրէն հարկաւոր նախազգուշութիւններ։ Թէ չէ երբ կլանող թշնամին մարդկութեան բնակարանը ոտը կոխեց, այնուհետև դըժուար է նրան դուրս անել։

Օր չէ անցնում, որ մէկ կամ երկու հոգի Ռիոն գեաը իրան ղոհ չանէ։

Ց. Ամիրաղեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բագու, 20 յուլիսի

Նամակիս հետ միասին ուղարկեցի երեսուն և երեք ռուբլ յիսուն կոպ., որ ժողոված է մի խումբ դերձակների մէջ Եղիական տօնին, որը իրրև հին աւանդութիւն յարգում են մինչև այսօր ասիական հայ դերձակ արհեստաւորները։

Ինքն ըստ ինքեան գովելի է այն խումբը, երբ փոխանակ ափեղցիեղ խօսելու, փոխանակ ունայն և ընկերի սիրտ կոտրող զուարճախօսութեան, կը մտածեն ազգի, եկեղեցու և բարեգործութեան վրա և կարդիւնաւորեն իրանց խորհրդածութիւնները։

Ես պէտք է աւելացնէի և մի ուրիշ գումար դորա վրա, բայց իմ հանգանակութեան թերթը № 180, որ ուղղակի ստացել էի մի պաշտօնական նամակի հետ միասին Կ. Պոլսի «Միացեալ ընկերութիւնից», տարաբախտաբար անհետացել է մի ծանօթ հայի ձեռքում, որին յանձնել էի Կրասնավոդսկի անուանված նոր քաղաքում մի քանի բաժանորդներ աւելացնելու յիշեալ թերթի վրա։

Ցաւով եմ, որ բարեկամս այնքան ազնիւ գըտանվի, որ կաշխատէ ձեռք բերել իմ իրան յանձնած հանգանակութեան երկու թերթը № 180 և 176, որոնց սպասում է ընկերութիւնը ստանալ առատ նուէրով։

Կարծես ամէն տեղ անտարբերութիւն է տիրում «Միացեալ ընկերութեան» օգտի վերաբերութեամբ։

Խնդրում եմ բարեհաճել ուղարկել 33 ր. յիշեալ ընկերութեան (50 կ. փոստային ծախս է.) և տըպագրել նուիրատուների ազգանունները, որոնք են.—Առաքել Թումայեանց, Աղայ Միրզաբէգեանց 3-ական ր., Միքայէլ Տէր-Մինասեանց, Անյայտ ոմն 2-ական ր., Կարապետ Միրզաւաղեանց, Աստուածատուր Թումայեանց, Յակոբ Ղահրմանեանց, Յակոբ Բաղալեանց, Յակոբ Մանկասարեանց, Համբարձում Սարգսեանց, Նիկոլայ Գրիգորեանց, Պօղոս Իսախանեանց, Նիկոլայ Այտինեանց, Միրզայ Իշխանեանց, Միրզայ Արուտչեանց, Գրիգոր Հայրումեանց, Աբրահամ Բաղդասարեանց, Ղազար Թումայեանց, Միրզայ մահտեսի Միրզայեանց, Իվան Լալաբէգեանց, Կոստի Բաղալեանց, Ուստայ Համբարձում, Աւագ Սրաբէգեանց, Իվան Դաւթեանց, Լևոն Թումանեանց, Աստուածատուր Սերեբրակեանց 1 ր., Համբարձում Բաբաջանեանց, Մկրտիչ Աբրահամեանց և Սերգէյ Աւանէսեանց 50-ական կոպէկ։

Խորէն քահ. Միրզաբէգեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Յուլիսի 23-ին մի զարմանալի երևոյթ էր նըշմարվում Թիֆլիսում։ Օրը ամպած էր և արեգակի ճառագայթները, անցնելով ամպերի միջով ամէն առարկաները լուսաւորում էին կատարելապէս կարմիր լուսով։ Այդ երևոյթը դրանով է բացատրվում, որ Թիֆլիսից ոչ հեռու, երկաթուղու գծի վրա գտնվող անտառները այրվելով, հրդեհի բոցը արտափայլվում էր ամպերի և օդում մեծ քանակութեամբ եղած ծուխի մէջ և արեգակի ճառագայթները անցնելով այդ թանձր օդի միջով, կարմիր գոյն էին ստանում։

—

Սուրամի անտառներից հրդեհը անցաւ Բօրժոմի անտառներին։ Երկու շաբաթ շարունակ անտառները այդ կողմերում այրվում են։ Ասում են թէ Բօրժոմի անտառները, նրանց այրվելու շարունակվելուց պահպանելու համար գործ դրած ջանքերի չնորհով, ազատվեցան արդէն հրդեհից։ Ուրիշ կողմից, ասում են, թէ կրակը անցել է Մանգլիսի անտառներին։ Երևի այս տարի վառելափայտը սաստիկ կը թանգանայ Թիֆլիսում։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է որ իշխան Դոնդուկով-Կորսակով վաւերացրեց Ֆոն-Իրտէլի գործի մասին Թիֆլիսի զինուորական դատարանի կայացած վճռի մի մասը միայն, կախաղանի հինգ դատապարտվածներից միայն երեքին մահապարան չինել։ Կարելի է արդեօք այդ երկու գաղափարները միացնել։ Կարելի է արդեօք մի ուսումնարան ունենալ բարեկարգ վիճակով, եթէ ծնողաց կողմանէ մեր պայմանները ոչ միայն չը կատարվեն, նաև մինչև անգամ այդ կարևորութիւնը ճանաչելու տրամադրութիւնը չը լինի։ Բոլոր հայերի մէջ մի մանուկին ուսումնարան են տալիս մի բան սովորելու համար, Բագուի մէջ ուսումնարան են տալիս գլխաւորապէս տանը չարութիւն չանելու համար։ Եւ ոչ մէկ տեղ մատաղ սերունդը այնքան ապականված չէ, աննկարելի չարութեանց այնպէս շուտով ընտելանալու այնքան բնական պայմաններ չունի, ինչպէս մեր մատաղ սերունդը։ Մեզանում կարծես գիտութեամբ հասարակական և կենսական պարագաները այնպէս համակերպված են, որ անշուշտ մատաղ սերունդը 8—10 տարեկանից պիտի զգայ, ճանաչէ և ակամայ ընտելանայ այն պատերին և ունակութեանց, որի առաջ մենք մեծերս պիտի կարմրէինք....։ Մի երևոյթ չը կայ մանկական աշխարհի մէջ, որ նրանց համար առաքինութեան օրինակ լինէր։ Մինչև անգամ մեր եկեղեցին զուրկ է բարեպաշտ երկիւղածութեան զգացմունք զարթեցնելուց մանուկ սերունդի մէջ, որովհետև նրանք ստիպված են ծիծաղել երբ Աւետարան են կարդում....։ Ահա թէ ինչ բնաւորութիւն ունեն մեր մատաղ սերունդի դաստիարակութեան պարագաները, որոնց պատկերը համեստութենէ ըստիպված՝ քօղարկեալ ստուերով պիտի նկարագրէի։

Ահա այսպիսի անյաջող՝ մեծ աշխատանքի կարօտ հողի վրա Մարդ. ընկերութիւնը կամենում է իր տկար արօրը բանացնել։

II.

Ընկերութեան նախկին ղեկավարների նման՝ ներկայ վարչութիւնը ևս նոյն տեսակ հարց է դընում.—ինչ անենք՝ որ մեր ուսումնարանը բարեկարգվի, արդիւնք բերէ, հասարակաց ուշադրությանսին՝ մեր կարծիքով առնվազն անխոհեմութիւն ու կամակոր տգիտութիւն է։

Այս ընթացքը պահպանելու ջանքը անշուշտ խոհեմութեան նշան կանուանէինք, եթէ Բագուի պէս տեղում, մանաւանդ վերջին տարիներս՝ հրաշակաւոր Մարդասիրական ընկերութեան խնամքի ու հսկողութեան տակ կառավարված տասն և երկու տարեկան ազգային ուսումնարանը մի չոչափելի արդիւնք տուած լինէր ազգային լուսաւորութեան նկատմամբ։

Հետախուզեցէք մեր ուրիշ ազգային ծխական ուսումնարանների պատմութիւնը,—հեռու չը գընանք, վեր առնենք թշուառ կործանված Շամախու ուսումնարանները, որոնք տաս տարվայ չափ հազիւ գոյութիւն ունեն՝ կը տեսնենք գոյա զրաւի արդիւնքը ամէն տեղ բազմատեսակ արդիւնաւոր ձեռով մարմնաւորված,—քահանայ, ուսուցիչ, գրագիր, լրագրական նամակագիր, գրաղէտ վաճառական, ընթերցասէր գործակատար կամ արհեստաւոր և այլն, և որ աւելին է՝ մայրենի լեզուի մէջ բաւականին վարժված և ազգային հոգով կրթված աշակերտներ պետութեան միջնակարգ ու բարձր ուսումնարաններում։ Բայց ինչ է ավել մեզ այդ մեր Բագուի ուսումնարանը, որ յոգնավատակ խնամոց ու նիւթական զոհաբերութեանց ենթակայ է։ Ցաւ է մեզ ասել, որ այդ ուսումնարանը՝ չը նայելով իր յաջող դրութեան և բարեկարգ պահելու համար եղած ջանքերին, տասն և երկու տարուց յետոյ կարող չէ ցոյց տալ մէկի վրա պարծենալով, թէ սա է մեր ուսումնարանի ծնունդը՝ և այստեղ է ստացել հոգոյ ու սրտի այնքան մնունդ՝ որ անձնատուր լինելով իր ուժերին՝ չասենք մտացական բարձր աստիճանի է հասել, այլ թէ հասարակ գրագէտ է եղել։ 4—6 տարի այստեղ աշակերտելու թշուառութիւն ունեցող երեխան՝ ուսումնարանից դուրս գալուց յետոյ մի հասարակ բարևագիր գրելու վարժութիւն չէ դուրս բերում, չասենք՝ որ իր կրօնից, ազգից, անցեալից, ներկայից և վերջապէս նրա բարերարող ընկերութեան սկզբունքներից ամենևին գաղափար չէ պաշարում։

Այո, դառն է խոստովանել այս ցաւալի ճշմարտութիւնը, բայց նոյն իսկ այս դառնութիւնը քաղցրացնելու նպատակով է, որ այս խոստովանութիւնը պիտի կատարենք։

Մարդասիրական ընկերութեան բոլոր ճիգը ու վաստակը դրվում են այս ուսումնարանի վրա բոլորովին ապարդիւն՝ ինչպէս երկնքի չնորհ անձրևը անօգուտ թափվում է Բագուի աւազների վրա։ Սա մի դաժան աշխատանք է, որ ենթէ լաւ իմաստասիրվի՝ անէծքի անուն պիտի ըստանայ։

Ինչ է արդեօք այս ցաւալի դրութեան բուն պատճառը, որ մեր ծխական ուսումնարանները Բագուի հողի նման ամուլ և անբեր են։ Անկարելի է որ այս պատճառը չորոշվի, եթէ փոքր ինչ մեր հայեացքը լայնացնենք և իմանալու իրաւունք ու մտադրութիւն ունենանք։ Իմ կարծիքով սորա պատճառը մի կողմից՝ կարևորութեան պահանջի և արտաբերութեան անհամապատասխան զուգաւորութիւնն է, միւս կողմից՝ Բագուի հայ ազգաբնակութեան առեղծված բնաւորութեան յատկութիւնները և կենսական պայմանները։

Մեր ուսումնարանը մի որկրամոլ Շարայ դարձած է, և տարաբաղդաբար ընկերութեան ամբարները Շիրակինը չեն, որ այդ լավող որկորը կըշտացնեն։ Նոյն իսկ մեր ծնողները բոլորովին անհոգ ու անտարբեր են իրանց զաւակի դաստիարակութեան, որոնք գոնէ իրանց բարոյական օժանդակութեամբ թեթևացնէին մեր ուսումնարանի անհամեմատ լուծը մեզ համար։ Բագուի հայ ազգաբնակութիւնը նախ և առաջ պահանջում է իր զաւակների համար խնամանոց. նրանք նայում են մեր ուսումնարանի վրա որպէս խնամանոցի վրա, իսկ մենք ուզում ենք դրանից ուսումնարան չինել։ Կարելի է արդեօք այդ երկու գաղափարները միացնել։ Կարելի է արդեօք մի ուսումնարան ունենալ բարեկարգ վիճակով, եթէ ծնողաց կողմանէ մեր պայմանները ոչ միայն չը կատարվեն, նաև մինչև անգամ այդ կարևորութիւնը ճանաչելու տրամադրութիւնը չը լինի։ Բոլոր հայերի մէջ մի մանուկին ուսումնարան են տալիս մի բան սովորելու համար, Բագուի մէջ ուսումնարան են տալիս գլխաւորապէս տանը չարութիւն չանելու համար։ Եւ ոչ մէկ տեղ մատաղ սերունդը այնքան ապականված չէ, աննկարելի չարութեանց այնպէս շուտով ընտելանալու այնքան բնական պայմաններ չունի, ինչպէս մեր մատաղ սերունդը։ Մեզանում կարծես գիտութեամբ հասարակական և կենսական պարագաները այնպէս համակերպված են, որ անշուշտ մատաղ սերունդը 8—10 տարեկանից պիտի զգայ, ճանաչէ և ակամայ ընտելանայ այն պատերին և ունակութեանց, որի առաջ մենք մեծերս պիտի կարմրէինք....։ Մի երևոյթ չը կայ մանկական աշխարհի մէջ, որ նրանց համար առաքինութեան օրինակ լինէր։ Մինչև անգամ մեր եկեղեցին զուրկ է բարեպաշտ երկիւղածութեան զգացմունք զարթեցնելուց մանուկ սերունդի մէջ, որովհետև նրանք ստիպված են ծիծաղել երբ Աւետարան են կարդում....։ Ահա թէ ինչ բնաւորութիւն ունեն մեր մատաղ սերունդի դաստիարակութեան պարագաները, որոնց պատկերը համեստութենէ ըստիպված՝ քօղարկեալ ստուերով պիտի նկարագրէի։

Ահա այսպիսի անյաջող՝ մեծ աշխատանքի կարօտ հողի վրա Մարդ. ընկերութիւնը կամենում է իր տկար արօրը բանացնել։

II.

Ընկերութեան նախկին ղեկավարների նման՝ ներկայ վարչութիւնը ևս նոյն տեսակ հարց է դընում.—ինչ անենք՝ որ մեր ուսումնարանը բարեկարգվի, արդիւնք բերէ, հասարակաց ուշադրու-

վան դատապարտելով, իսկ մնացածներին նշանակված պատիժները մեղմացնելով։ Ասում են որ մահվան պատիժը հրապարակական կը լինի։

—

ԲԱԹՈՒՄԻՑ պ. Գալուստ Շիրմազանեանց ուղարկել է մեզ 18 ր. 20 կոպ., որ հաւաքվել է այդ քաղաքում յօգուտ Կ. Պոլսի Միացեալ ընկերութեան։ Այդ գումարը նուիրել են հետեւեալ անձինք։ Սարգիս Յովհաննիսեան 5 ռուբլ, Գալուստ Շիրմազանեան 3 ր. (և փոստի ծախս), Նիկո Զաալով (վրացի) 1 ր. 20 կ., իսկ բոլոր մնացածները մի մի ռուբլ։ Մովս. Աղամեան, Պետր. Խանբէկեան, Դաւ. Խալաթեանց, Օգսէն Վ.ահանեան, Գրիգ. Թէօֆիլաքի (յոյն), Յակոբ Յակոբեան, Ոմն, Կոստանդ Կոստանդեան և Սեւոյք Վարդապետեան։

—

Լսում ենք որ եկող տարուց սկսած Փոթի-Թիֆլիսեան և Բաքու-Թիֆլիսեան երկաթուղիների վարչութիւնները դիտաւորութիւն ունեն այլ ևս չը գործ ածել փայտ լոկոմոտիվներ տաքացնելու համար, այլ վառելափայտը կը փոխարինվի նաւթով։

—

«Մշակի» ներկայ համարի բանասիրականի բաժնում տպում ենք բժիշկ Մ. Արամեանի յօդուածը։ Հեղինակը խնդրել է մեզ իր յօդուածը մեր լրագրի բանասիրականի մէջ տպելուց յետոյ հրատարակել նրան և առանձին բրօշիւրով։ Դժբաղդաբար չենք կարող կատարել յարգելի բժշկի խնդիրքը, տպարանում աւելորդ տառեր չը լինելու պատճառով, երբ որ արդէն պ. Բաֆֆիի գրուածքը առանձին բրօշիւրով է տպվում։

—

Մեզ խնդրում են տպել 17-ին յունիսի յօգուտ Թիֆլիսի Հայոց ընկերութեան Կօջօրում տուած պարահանդէսի հետեւեալ հաշիւը։ «Վաճառված են տոմսակներ և ստացված են այլ և այլ անձերից տոմսակների գնից աւելի 295 ռուբլ։ Ծախս եղել է. երաժշտի համար 29 ր., նուագածուներին և նրանց ճանապարհածախս 33 ր., հրախաղի համար 17 ր., գոյնաւոր լապտերների վարձ և մոմ 12 ր. 29 կ., մանր ծախսեր 15 ր. 57 կ., ընդամենը 106 ր. 86 կ.։ Մնացած զուտ գումարը 188 ր. 14 կ., տուած է ընկերութեան անուամբ Առևտրական բանկ, ընթացող հաշիւով։ Ընկերութեան վարչութիւնը պարտք է համարում իր անկեղծ շնորհակալութիւնը յայտնել Կօջօրի աւանապետ պ. Ղորղանեանին, որ իր գործակցութեամբ աջողեցրեց պարահանդէսը։

—

ՂՈՒԲԱՅԻՑ յուլիսի 19-ից մեզ գրում հետեւեալը։ «Չը նայելով որ բոլոր կենսական մթերքները առատ են մեզ մօտ այս տարի, այնու ամենայնիւ հացի գինը այժմ ծախվում է այստեղ 3 կոպէկով, ոչխարի մսի գինը արժէ 8 կոպ., իւղի գինը 25 կոպ., ձուի 5 հատը 5 կոպ., ճտի 20 կ., փայտի սայլը 1 ր. 60 կ., իսկ ածուխի ջուալը 60 կոպ.։ Եղանակները շատ լաւ են և հունձը այս տարի շատ աջող է։»

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Ա. Բահաթրեանցից նրա հեղինակութիւնը «Ուղեցոյց հայ ուսուցչի» վերնագրով։ Սա ընդհանուր մեթոդիկա է։ Գիրքը նուիրված է հայոց ընդհանուր Ուսուցչական ժողովին և հրատարակված է պ. Ալէքսանդր Մէլիք-Հայկազեանի ծախսով։ Տպված է Թիֆլիսում Մ. Վարդանեանի և ընկ. տպարանում, ներկայ 1882 թվին։ Գինը 1 ռուբլ է, առնել կարելի է Զաք. Գրիգորեանցի գրախանութում։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Сборникъ Кавказск. Общ. Сельскаго Хозяйства» Выпускъ IV. Գիրքը պարունակում է իր մէջ 3 հատ քարտէզներ 9 աղիւսակներ և հետեւեալ յօդուածները. 1) Ռոդումն Սպանիայում, 2) Գօրու գաւառը և նրա անտառաբուժական ու առողջական պայմանները և 3) Հաշիւ էկսպէրտների ֆիլօկսերայի մասին Կովկասում 1881 թվի։

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ հետեւեալը յուլիսի 21-ից։ «Երեկ գիշեր անյայտ չարագործներ մրտնելով մի տուն, վիրաւորեցին մի հայ երիտասարդին, հասցնելով նրան երեք հարուած, երկուսը խանչալով և մէկը գնտակով։ Երիտասարդը դեռ կենդանի է, բայց հարուածները մահացու են։ Նոյն երեկոյ երկու մարդիկ կուելով ու ծեծվելով, նրանցից մինը այնպիսի մի հարուած ստացաւ կողքին, որ նրան մինչև տուն հասցնելը ողորմելին արդէն մեռաւ։ Մի ամիս չը լրացած Երևանում սպանվեցան, ուրեմն, 6 հոգի։»

—

Ինչպէս մեզ գրում են, երկրորդ ամիսն է անցնում որ ՄԱՆԳԼԻՍԻ բնակիչները անձրևի երեսը չեն տեսած։ Շոքը անասանելի է. մարդը ձուի պէս խաշվում է տաքութենից։ «Անհնարին կը լիներ այդ չոքերին դիմանալ, գրում է մեր թղթակիցը, եթէ կէս օրից յետոյ զովարար, մեղմ քամի չը փչէր ամեն օր։ Երեկոյեան զովարար օդը մեզ մոռացնել է տալիս ցերեկվայ անտանելի շոքը։»

—

Նոյն տեղից մեզ գրում են հետեւեալը։ «Մի երիտասարդ, ինչպէս իմացանք հրէայ, որ ամբողջ 3 ամիս այստեղ ժամագործութեամբ էր պարապում, յուլիսի 19-ին երեկոյեան, յանկարծ փախաւ այստեղից իր հետ տանելով զանազան անձանց ոսկեայ և արծաթեայ ժամացոյցներ, արժողութեամբ մօտ 200 ռուբլ դրամարի։»

—

Մեզ խնդրում են տպել հետեւեալը։ «Բաթումի հայոց ծխական դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է որ հարկաւոր է Բաթումի ուսումնարանի համար մի դասատու որ կարողանայ դասախօսել հայոց և ռուսաց լեզուներից և թաւանութիւնից։ Ուսումնարանը միջոց ունի օրական չորս դասի համար վճարել տարեկան ռոճիկ 400 ռուբլ։ Հոգաբարձութիւնը խնդրում է ցանկացողներին դիմել ուղղակի իրան հետեւալ հասցէով. Въ Батумъ, Попечительству Армянской приходской школы.»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական պատգամաւորներին յուլիսի 25-ին բաժանված „Դեղին գիրքը" բովանդակում է իր մէջ բոլոր հեռագիրները եգիպտական գործերի մասին մինչև յուլիսի 2-ը։ Մայիսի 14-ին ուղարկած հեռագրի մէջ արտաքին գործերի մինիստր Ֆրէյսինէ կարծիք է յայտնում, որ անյարմար կը լինէր հրաւիրել միւս պետութիւններին Անգլիայի և Ֆրանսիայի հետ իրանց նաւատորմիները Եգիպտոս ուղարկել։ Այդպիսի գործը անգլօ-ֆրանսիական գործողութիւններից կը խլէր զեկավարող բնաւորութիւնը, որ Եւրոպան ճանաչում է և չէ կամենում մերժել։ Մայիսի 16-ից ուղարկված հեռագրով ծովապետ Ժօրես, ֆրանսիական դեսպանը Ս. Պետերբուրգի մէջ, հաղորդում է ռուսաց արտաքին գործերի մինիստր Գիրսի յայտնութիւնը ծովային ցոյցի մասին այն մտքով, որ Ռուսաստանը Ֆրանսիայի և Անգլիայի հրահանգների հակառակ հրահանգներ երբէք չի տայ. Նա կամ կատարեալ չեզոքութիւն կը պահպանի կամ Ֆրանսիայի և Անգլիայի կարծիքի համեմատ կարծիք կը յայտնի։ Ֆրանսիական Բերլինի դեսպանը, բարօն դը-Կուրսել, մայիսի 20-ից հաղորդում է, որ Գերմանիան պահպանում է նոյն տեսակէտը, ինչ որ նա ունէր Ֆրանսիայի հետ եգիպտական հարցի մասին բանակցելու ժամանակ։ Այնու ամենայնիւ Գերմանիան կարելի չէ համարում պաշտօնապէս պաշտպանել Ֆրանսիայի բոլոր յայտնութիւնները կ. Պոլսի մէջ, քանի որ այդ մասին զանազան կարծիքներ են յայտնում մի քանի կառավարութիւններ, որոնցից Գերմանիան չէ կամենում անջատվել։ Այնու ամենայնիւ Գերմանիան կաշխատի այդ կառավարութիւններին ներշնչել այնպիսի հայեացքներ, որոնք աւելի համեմատ լինէին Ֆրանսիայի հայեացքների հետ։ Թիւրքաց Բերլինի դեսպան, Սաադուլա-բէյ, խնդրեց գերմանական կառավարութիւնից գործադրել իր ազդեցութիւնը ծովային ցոյցի առաջն առնելու համար, որովհետև, դեսպանի կարծիքով, միայն սուլթանը իրաւունք ունի միջամտել եգիպտական գործերին։ Մինիստրի օգնական, դօկտօր Բուշ, պատասխանեց դեսպանին, որ նրա կարծիքով, Թիւրքիան խոհեմութիւն արած կը լինէր, եթէ արևմտեան պետութիւնների հետ համաձայնութիւն կայացներ եգիպտական հարցը լուծելու համար։ Ֆրանսիայի ներկայացուցչի հեռագիրները Ալէքսանդրիայից պնդում են, որ Թիւրքիայի ազդեցութիւնն է պատճառ, որ եգիպտական կառավարութեան հետ համաձայնութեան կայացնելը անկարելի է դարձել։ Մի ուրիշ հեռագրի մէջ ասված է, որ Գերմանիան հաւանում է կոնֆերենցիան, իբրև յարմար միջոց պետութիւնների մէջ ցանկալի համաձայնութիւնը հաստատելու համար։

—

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՐՑ

—

Մենք չը սխալվեցանք, ենթադրութիւն յայտնելով, թէ Անգլիան չի դադարեցնի

թիւնը դրաւէ և ընկերութեանս վարկը բարձրանայ։ Մի հին հարց՝ որ նոր մարդերին է յանձնված պատասխանելու։ Բայց որովհետև հարցը ինքն ըստ ինքեան սխալ է դրված և պարագաները պայմանաւորված, այդ պատճառով և նոր մարդերի տուած պատասխանը ևս սխալ եզրակացութիւն պիտի ունենայ։

Ներկայ վարչութիւնը այսպէս մի հարց է առաջարկել Բաքուի ծխական ուսումնարանի ուսուցչական խմբին և խորհրդի անդամներից կազմված յանձնաժողովին։

Ուսուցչական ժողովը այդ ուսումնարանի ծրագիրը խմբագրել է տեղի և ժամանակի պահանջման համեմատ, առանց ուշադիր լինելու թէ արդեօք այդ ծրագիրը մարմնացնելու համար կայ նիւթական կարողութիւն։

Յանձնաժողովը պատրաստել է իր ծրագիրը ընկերութեանս դրամական ուժերի համեմատ։ Երկու ծրագիրների տարբերութիւնը այն է, որ առաջինը սահմանելով ուսումնարանի կարևորական չափը՝ համապատասխան նիւթ է պահանջում։ Երկրորդը նիւթն է տալիս՝ և ըստ այնմ ուսումնարան է ձևում։ Քննենք ուսուցչական խմբագրութեան բանաւոր պատճառները։

Որ Բաքուն իր դրութեան, բազմատեսակ պահանջների համեմատ առ նուազն մի այնպիսի ուսումնարանի կարևորութիւն ունի, որ համեստ սահմանով ծրագրված է ուսուցչական խմբագրութեամբ՝—դա անհերքելի ճշմարտութիւն է։ Բայց որ նախ և առաջ Բաքուի շրջաններում ծաղկոցների կարևորութիւն կայ՝ նոյն իսկ մատաղ սերունդի վարքը-բարքը անբիծ պահելու և փողոցի ապականող ազդեցութիւնից զերծ պահելու համար,—սա առաւել մեծ ճշմարտութիւն է։

Աչքի առաջ ունենալով այդ անհրաժեշտ կարևորութեանց ստիպողականութիւնը՝ համարձակարար խոստովանում ենք, որ մինչև Բաքուի պէս տեղում ազգային դաստիարակութեան խնամակալութիւնը և կառավարութիւնը բարեգործական և իշխանական տիտղոսով ստանձնած է Մարդասիրական ընկերութեան նման մի հռչակաւոր համազգային ընկերութիւնը կարողանէր անդամներով,—հասարակութեան բնական իրաւունքն է պահանջել առ նուազն մի այնպիսի ազգային կրթարան, որ ծրագրված է ուսուցչական խմբագրութեամբ։

Մի այսպիսի ուսումնարան Բաքուի մէջ՝ ազգային կրթութեան նկատմամբ բեղմնաւոր անելու և նրա խնամող ու կառավարող հոգաբարձութեան վարկը ու անունը յարգելի անելու համար առ նուազն 16,000 ռուբլ է հարկաւոր։

Երկու ծաղկոց մինը Շամախու ճանապարհի վրա, միւսը բերդաքաղաքում կամ կենտրօնում, իւրաքանչիւրը երկու բաժանմամբ։

Մի ծաղկոցի համար առ նուազն	
Տուն-ընակարան	400 ր.
Ծառայ և փայտ	220 »
Երկու ուսուցիչ	1,200 »
Ուսումնարանական պիտոյից	100 »
Ընդամենը մի ծաղկոցի համար 60 չափ մանուկ	1,920 »
Երկուսի համար	3,840 »
Կենտրօնականի համար	1,200 »
Ընդամենը երեք ծաղկոցի համար	5,040 »

Մի կենտրօնական ուսումնարան հինգ դասարանով տղայոց համար, երեք դասարանով օրիորդաց համար, 207 ժամով.

Նորա համար պէտք է

Չորս ուսուցիչ 80 ժամերով	4,000 ր.
Երեք ուսուցիչ 54 »	2,400 »
Երեք ուսուցիչ ևս 54 »	1,800 »
Մի կրօնուսոյց 19 »	600 »
Մի վերակացու դաստիարակ	480 »
Մի վարժուհի-դաստիարակ ձեռագործ	480 »
Մի վարժուհի կարի և ձևի	600 »
Ուսումնարանական պիտոյից, ասեղնագործութեան նիւթ, մատենադարանի և թանգարանի համար	500 »
Ընդամենը	10,860 »
Աւելացնելով սորա վրա և ծաղկոցներին կարևոր ծախքը	5,040 »
Ընդամենը	15,900 »

Այս չափով նկարագրված ուսումնարան թէև սկզբնական է, բայց ուսումը ամբողջացրած։ Տղայոց հինգ դասատուններից երեքը նուիրված են ընդհանուր զարգացողութեան ազգային ղեցմամբ. մնացած երկուսը իսկապէս մի չորրորդ դասատան երկու մասնաւորական բաժանմունքներն են. մինը կընդունէ ուսումը պետական դպրոցներում չարունակել ցանկացողներին, միւսը նրանց, որոնք ստիպված են շուտով կենսական ապրուստի ճանապարհ բռնել։ Օրիորդաց երեք դասատունից իսկապէս երկուսը ընդհանուր զարգացողական կը լինեն, երրորդը գործնական դպրոց՝ կար ու ձև սովորելու, որ իսկապէս մեր աղքատ դասի նկատմամբ կենսական ապրուստի համար ամենաձեռնտու միջոց է։

Տարաբաղդաբար ընկերութիւնը մի այսպէս ուսումնարան ունենալու կարողութիւնը չունի։ Նորա համար կարևոր ծախքը ոչ միայն նորա նիւթական, նաև բարոյական կարողութիւնից վեր է։ Նա չէ կարող իր վարկին վրա յոյս դնելով՝ հասարակութեան սիրտը և օժանդակութիւնը ստանալ։ Նրանից ուրեմն պիտի եզրակացնենք՝ որ ուսուցչական ծրագիրը նոյն իսկ ծննդեան օրից մեռնելու է դատապարտված։ Այն թուղթը, որի վրա գրված է այդ ծրագիրը առաւել օգուտ կը բերէր չայի չաքարի ծրար-փաթաթան լինելով, քան թէ այդ անյոյս բանը պատկերացնելով։

Մնում է յանձնաժողովի ծրագիրը քննել։

Յանձնաժողովը ստիպված է իր ծրագիրը հիմնել ընկերութեանս դրամական հաստատուն արդեանց վրա և այն չինութեան, որ պիտի ամփոփէ Բաքուի ծխական ազգային ուսումնարանները կենտրօնական ծաղկոցով։

Շինութեան վրա խօսելը իսկապէս ժամանակի սպառումն է։ Իցէ թէ մեծ ծախսով վերաշինեցին, այլ ոչ թէ կարկատեցին Տրիշկինի վերարկուի նման, ինչպէս սովոր է մեր վարչութիւնը անել։ Այն ժամանակ այդ չինութեան մէջ կարելի է միմիայն 6 դասատուն ունենալ,—դասատուութեան համար յարմարացրած սենեակներ։ Եթէ երկուսը ծաղկոցի համար նշանակել, կը մնայ չորսը. երկուսը տղայոց, երկուսը օրիորդաց համար։ Հարց. կարելի է երկու սեռի համար մի ուսումնարանական ծրագիր մշակել, որ սկզբնական բնաւորութիւն ունենալով կատարելագործված ամբողջութիւն պարունակէ։ Պատասխանը բացասական է։ Իցէ թէ մշակվեցաւ։ Սակայն բաւ է այն գումարը, որ ընկերութիւնը կարող է տրամադրել իր եկամուտից,—6,000 ր։ Այո, 6,000 բաւ է. բայց եթէ նրանից ամենաքիչը 2,500 առնվի ծաղկոցների համար՝ մնացած 3,500 մանէթով՝ Բաքուի պէս զբաղարաստրուստ քաղաքում չորս դասարանով մի ուսումնարան կարելի է պահել ասելու խօսքը անմտութիւն է։

Ամենաքիչը հարկաւոր է	
Երեք ուսուցիչ 66 ժամով	2,400 ր.
Երեք ուսուցիչ 36 »	1,800 »
Մի կրօնուսոյց 18 »	360 »
	4,560 »

Սա միայն ուսուցիչների վրա ծախս. մանաւանդ որ ինչպէս ուսուցչաց թվի, նոյնպէս նոցա նշանակվելու վարձը առնուազ աստիճանն է նշանակված։ Երազն իրարին կատարեցէք։ Նայելու է էֆիմերդէին, թէ որ աստղի տակ այդ երազը երևեցաւ։

(Կը շարունակվի)

իր պատերազմական գործողութիւնները, եթէ Բ. Դուռը ուշ յայտնի համաձայնութիւն եգիպտական գործերին միջամտելու մասին, գրում է „Голосъ“։ Այն հրահանգները, որոնց անգլիական կառավարութիւնը ուղարկեց իր դեսպան լորդ Դէֆերինին և որոնց մասին Գլադստոն տեղեկութիւն հաղորդեց անգլիական համայնքների ժողովին, ուղղակի ցոյց են տալիս Անգլիայի անդառնալի վճիռը շարունակել սկսված գործը։ Անգլիական կ. Պոլսի դեսպանի միջնորդութեամբ սուլթանին հաղորդված է, որ Անգլիան Եգիպտոսի մէջ կընդունի իւրաքանչիւր պետութեան օգնութիւնը, չը բացառելով և Թիւրքիային, միայն թէ նա առաջուց կամենում է իմանալ թիւրքաց արշաւող զօրքերի թիւը, այդ զօրքերի Եգիպտոս ուղարկելու ժամանակը և զօրքերի դիրքերը։ Բացի այդ սուլթանից պահանջվում է որ նա Եգիպտոս զօրքեր ուղարկելուց առաջ բացարձակ պաշտպանութիւն ցոյց տայ խեդիվին, իսկ Արաբի-փաշային ապստամբ յայտնի։ Այդ հրահանգները համայնքների ժողովին հաղորդելով, Գլադստոն նրանց աւելի մեծ նշանակութիւն տուեց, աւելացնելով, թէ երբ նա ասում էր, որ Բ. Դուռը անցկացրեց զինաւորված միջամտութեան ժամանակը, նա այդ խօսքերով կամենում էր ասել, որ սուլթանը օգուտ չը քաղեց իր բարձր իրաւունքներից Եգիպտոսի մէջ հանգստութիւնը վերականգնելու համար միայն թիւրքաց զօրքերի միջամտութեամբ։

Գլադստոնի այդ խօսքերից յետոյ ամէն բան պարզվում է։ Անգլիան վերջնականապէս հրաժարվում է դադարեցնել իր պատերազմական գործողութիւնները Եգիպտոսի մէջ և ընդունում է Թիւրքիայի օգնութիւնը միայն յայտնի պայմաններով։ Եգիպտոս ուղարկվելիք Թիւրքաց զօրքերի քանակութեան, կազմակերպութեան և ուղևորվելու ժամանակի մասին անյապաղ տեղեկութիւնների պահանջելը նշանակում է, որ անգլիական կառավարութիւնը ընդունում է Թիւրքաց զօրքերի օգնութիւնը այն պայմանով, որ այդ զօրքերը կը գործեն անգլիական արշաւող զօրքերի հրամանատարի ստրատեգիական նախագիծների համեմատ։ Աւելի մեծ ուշադրութեան արժանի է անգլիական կառավարութեան պահանջը, որ սուլթանը Եգիպտոս զօրքեր ուղարկելուց առաջ պաշտպանութիւն յայտնի խեդիվին, իսկ Արաբի-փաշային ապստամբ հրատարակի։ Դա ապացուցանում է, որ անգլիական կառավարութիւնը կասկածում է Բ. Դրան դիտաւորութիւնները։ Թիւրքաց զօրքերի Եգիպտոս դնալը թոյլ է տրվում այն պայմանով, որ նրանք իրանց թագաւորի խոստումով պարտաւորված կը լինեն Անգլիայի հետ գործել և նրա հետ նոյն նպատակներին ձգտել։ Որ այդ պահանջի միտքը այդպէս պէտք է մեկնել, ապացուցանվում է նրանով, որ Բ. Դուռը սկզբունքով համաձայնութիւն յայտնելով Արաբի-փաշային ապստամբ հրատարակել, մի և նոյն ժամանակ չէ կամենում այդ գործը կատարել առաջ, քան թէ Թիւրքաց զօրքերը ոտք կը կոխեն Եգիպտոս։

Դեռ յայտնի չէ, կընդունի արդեօք սուլթանը Անգլիայի տուած պայմանները։ Բայց կարելի է համարձակ պնդել, որ մինչև սուլթանը չընդունի այդ պայմանները, նա անկարող կը լինի իր զօրքերը Եգիպտոս հասցնել առանց անգլիացիների կողմից ընդդիմադրութեան հանդիպելու։

Շատ կարելի է, որ Թիւրքաց զօրքերը Եգիպտոս հասնելով, կը հանդիպեն այնտեղ ոչ թէ միայն անգլիացիներին, այլ և ֆրանսիացիներին։ Ինչպէս երևում է, սուլթանի համաձայնութիւնը եգիպտական գործերին միջամտելու մասին փոփոխեց Ֆրէյսինէի դիտաւորութիւնները։ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը, պահանջելով դադարեցնել պարլամենտական վիճաբանութիւնները եգիպտական արշաւանքի համար պահանջվող կրեդիտի մասին, յայտնեց, որ Թիւրքիայի ցանկացած միջամտութիւնը եգիպտական գործերին անհրաժեշտ է դարձնում նոր բանակցութիւնների կատարելը Անգլիայի հետ, իսկ Գամբետտայի „Republique Française“ լրագիրը պահանջում է, որ ֆրանսիական մի նշանաւոր զօրաբաժին ուղարկվի Եգիպտոս, որպէս զի դրանով ոչնչացվի այն տպաւորութիւնը, որ կը գործի Աֆրիկայի մահմետականների վրա Թիւրքաց զօրքերի Եգիպտոս հասնելը։ „Republique Française“ լրագրի առաջարկած միջոցը այնպիսի համակրութեամբ ընդունվեցաւ Ֆրանսիայի մէջ, որ Ֆրէյսինէ կարող է դրա նման մի որոշումն անել։ Դեռ նորերումս ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը ստիպված էր լսել սենատի մէջ իր նախորդներից մէկից, Վադդինգտոնից, որ Գամբետտայի քաղաքականութիւնը աւելի էր համապատասխանում Ֆրանսիայի արժանաւորութեանը, քան թէ այժմեան մինիստրութեան եգիպտական քաղաքականութիւնը։ Վադդինգտոնի խօսքերը սենատորների մեծամասնութենից ծափահարութիւններով ընդունվեցան, մինչդեռ Ֆրէյսինէի պատասխանը սենատը լսեց գերեզմանական լռութեամբ։

Այդպիսով եթէ կայացաւ թիւրքաց միջամտութիւնը, նա չի դադարեցնի անգլիական միջամտութիւնը եգիպտական գործերին, իսկ վերջինի կողմը երևի կը լինի և Ֆրանսիան։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Տրապիզոն, 21 յուլիսի

Քաղաքս վերջին ծայր յուզման մէջ է. ինչպէս կը լսեմք բոլոր հիւպատոսք ազգու հեռագիրներ են ուղղած իրենց կառավարութեանց։ Սարսափը ընդհանուր է։ Երէկ գիշեր արևը մայր մտնելէն քիչ վերջը երկու հարիւրի չափ մահապարտ բանտարկեալներ բանտէն դուրս յարձակեցան բէվոլվերներով զինուած, և երեք չորս հատ պահապան զօրաց ահագին խումբը ցրուելով սկսաւ փախչիլ։ Դուք կրնաք հասկնալ հիմա այս բոպէիս քրիստոնէից կրած տագնապը և երկիւղը, բայց ուրախացէք լսելով որ մէկ բոպէի մէջ Տրապիզոնի ամբողջ քրիստոնեայ հասարակութիւնը պաշտպանողական դիրք առաւ. ինչպէս ես միքանի պարագաներէ ստուգեցի, իւրաքանչիւրը նոյն բոպէին հրազէն ի ձեռին իւր կեանքովը իւր տունը պաշտպանելու պատրաստ էր. ի չնորհս իւր դիրքին՝ Տրապիզոնի ինքնապաշտպանութեան սկզբունքը բաւական ընդարձակ ծաւալում մը գտած է. քառորդ մը վերջը հաղիւ ճաշի (իֆթար) նստած ոսմիկանները և զինուորները հրացաններնին առած քաղքին փողոցներուն մէջ վազվզիլ սկսան փախստականները ձերբակալելու նպատակաւ. քաղաքացի տաճիկներէն ոմանք կը մասնակցէին սոցա իրենց ոսկաւորիւն լինելուն պատճառաւ։ (Վիլայէթին մէջ ընդամենը հարիւր յիսուն ոսմիկան և զինուոր կայ եղեր)։ Փախստականներէն անձնատուր չեղողը դարնել հրամայվեցաւ և ահա հրացաններուն պայթիւնը սկսաւ լսուիլ փողոցներու ամեն մէկ կողմերէն, կիսահոգի դիակներ թաւալիլ սկսան։ Տրապիզոն բոպէ մը յեղափոխեալ փարիզին նմանեցաւ։ Բայց բարեբաղդութիւնը ասոր մէջ էր որ քաղաքական նպատակ մը չունէր այս, այլ բանտարկեալներուն փախուստ մ'էր, աւաղ որ ժողովուրդը ուշ հասկցաւ բուն նպատակը և իզուր վախցաւ. թուլացող և թալկահար ընկնող կիներ և կին-այրեր պակաս չեղան. Երանի մեր կառավարութեան ոյժ իւր բաղուկներուն որ իւր բանտարկեալները փախցնելէն վերջը ութը սպաննեց փողոցներուն վրայ, հինգ-տասը վիրաւորեց և մեծ մասը ըրռնեց, զինուորներէն ալ երկու հատ սպանեալ և մէկ քանի վիրաւորեալներ կան։ Այս յեղափոխութեան զոհ գնաց քրիստոնէից կողմէն մէկ յոյն կին մը որ զարնուեցաւ իրրև վախստական աղբիւրէն ջուր առած ժամանակ։

Հասկցէք Տաճկաստանին ներքին բարեկարգութիւնը։ Եթէ ծովեզերեայ քաղաքը այս տեսակ վտանգներու ենթակայ է, հապա ինչ են ցամաքային քաղաքները. բայց պէտք է սպասենք և համբերող լինենք որ 61-րդ յօդուածը բարեկարգէ հայաբնակ գաւառները։ Համբերութիւն, համբերութիւն, «Ով որ համբերեսցէ իսպառ նա կեցցէ։»

Կարծես իմ ճակատագիրն է միշտ զժբաղդ պատահարներ զեկուցանել ձեզ խառն ուրախութիւններով։ Ամսոյս 19-ին տեղէս վան մեկնեցաւ պ. Թօխմախեան որ վանեցի է. ինչպէս լսեցի, հոն ուսուցչութեան պաշտօն պիտի վարէ եղեր, եթէ ատոյգ է, շատ ուրախալի լուր մ'է այս։ Նոյնպէս այսօր տեղէս կը մեկնի քաղաքիս համազգային ընկերական վարժարանի տեսուչ Յ. Մեղասրեան ի Տփխիս կազմուելիք ուսուցչական ժողովի ներկայ գտնուելու համար. Տաճկաստանէն եթէ ուրիշներ հետևելու ըլան ասոր օրինակին շատ օգուտներ կրնան քաղել։

Վերջացնելով նամակս իմ ծիծաղս կը յայտնեմ «Արարատի» արժանապատիւ խմբագրութեան որ կը պնդէ թէ ազգութիւնը պահպանողը կրօնն է։ Հարցում մը միայն. կրօնը ինչու համար չը պահեր Լեհաստանի հայութիւնը։

* * *

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՅԻՑ

Վիէննա, 20 յուլիսի

Կ. Պոլսոյ սուլթանին եգիպտական հարցի նպատամբ բռնած ընթացքը լոկ համիսլամական դաղափար լինելուն ապացոյց «Դէբա» լրագրին 27 յուլիս համարում հրատարակված յօդուածը։

Ֆրանսիայում շատ անգամ հարց առաջարկողներ եղան թէ ինչի համար սուլթանը մինչ վերջին ժամանակներում Եգիպտոս միջամտութիւն անել չէր ուզած։ Երկու պատճառաւ չէր կարող անել այդ միջամտութիւնը։

Առաջինը, այն է որ, Արաբին լինելով մահմետականների ջերմ պաշտպան, դեմավորների դէմ մարզարէի դրօշակը պարզած էր. երկրորդ պատճառը, սուլթանը Արաբիին հետ հաստատած ունէր այնպիսի դաշնակցութիւններ, զորս, առանց համիսլամական չարժումը վտանգի ենթարկելու, սուլթանը չէր կարող խզել նոյն իսկ այդ նպատակին իրագործութեան միջոցին։ Արդարև ոչ ոքի համար ծածուկ մի բան չէ որ Արդուլ-Համիդը, դահընկալութեան օրից ի վեր ընդհանուր տիեզերքի վրայ համիսլամական դաղափար տարածելու յաղթանակով զրաղված է, որոյ իրագործութեանը նուիրում է անխոնջ եռանդ և մեծ փոյթ։ Իմամներից, Հէճազից, Եգիպտոսից, Սիրիայից, Այժիրից, Տունիսի գալով զինքը շրջապատող մոլեռանդ էյխերի աշխատակցութեամբ, նոյն իսկ իր պալատին մէջ բոլորովին մենկուսի մը իշխանութիւն հաստատեց, որոն միակ նպատակն է երկրի վրայ համիսլամական դաղափար քարոզել և տարածելով ընդհանրացնելու յաջողիլ։

Բ. Դուռը ինքզինքը միշտ հեռու բռնեց այս տեսակ քաղաքա-կրօնական պաշտօններից, որոնք կարող էին եւրոպական տէրութեանց դէմ ծանր դժուարութիւններ յարուցանել։ Մի միայն պալատն է որ կառավարում է այս կրօնական գաղափարի դեկը առանց տեղեկութեան և մասնակցութեան թիւրք նախարարների, որոնք երբեմն կանչվում էին պալատը այս մասին պէտք եղած գործակցութիւնը կարկառելու համար։

Այսպէս ուրեմն, սուլթանը ուզղակի յարաբերութիւններ ունի բոլոր մահմետականաց հետ, և իր ընտրած գործակալները մասնաւոր պաշտօն ունին հաստատեալ մահմետականաց կրօնական եռանդը բորբոքելու և քրիստոնէից, մանաւանդ Եւրոպացւոց դէմ մահմետականաց ատելութիւնը աւելացնելու։ Երբ մի տարի առաջ Տունիսի ապստամբութիւնը ծագեցաւ, սուլթանը անմիջապէս յարաբերութեան մէջ մտաւ ապստամբեալների հետ Շեյխ Զաֆարի և այլ Մարաբուդների միջոցաւ։ Ալի-Բէն-խալիֆը այն ժամանակ ապստամբների գլուխն անցնելով հրամանատարութիւնը յանձն առած էր, և Կ. Պոլսում մեծ յոյսեր ունէին իր վրայ։ Շեյխ Զաֆարը հաստատցրած էր որ պիտի յաջողի Տունիսի բէյին գահընկէց անելու և յետո սուլթանին ինքնիշխանութիւնը Տունիսում վերահաստատելու։ Այս խոստումների չնորհիւ, սուլթանից ստացաւ դրամ, նպաստ, զէնք և մինչև անգամ զօրք, որոնք իրանց ներկայութեամբը ապստամբները պիտի քաջալերէին։

Նոյնպէս ընթերցողը կը յիշէն, որ Տունիզի սահմանագլխի վրայ տեղի ունեցած յառաջապահ զօրաց կռուին մէջ ապստամբների ձեռքում երեք կողմից լցուող հրացաններ գտնվեցան, նմանապէս ապստամբների մէջ կային նաև օսմանեան փախստական զօրքեր, այսինքն հրահանգ ստացած դասալիքներ։

Սակայն և այնպէս Ալի-Բէն-խալիֆը չը կարողացաւ իրականացնել այն յոյսերը որ իր վրայ դրել էին։ Իր զօրութիւնը ջախջախվեց Սֆաքսում, ուրտեղ իզուր փորձ փորձած էր մեզ (ֆրանսիացւոց) դէմ զիմադրելու, այն օրից ի վեր չը յաջողվեցաւ իր կուսակիցները միացնելու։

Տունիզցիք նուազ պատերազմշներ են որքան կարծուում են, երբ տեսան խոստացեալ օսմանեան զօրաց Տրիպոլիս հասնելը և ֆրանսիացւոց դէմ զէնք չը բարձրացնելը, բոլորովին վատեցան։

Այս միջոցին Շեյխ Էսադը Եգիպտոսում Արաբիին հետ աշխատում էր. գոնէ Արաբին կարող է պարծենալ սուլթանին արած խոստումներովը, որով եւրոպացիներին Եգիպտոսից պիտի արտաքսէր, և մի կողմից էլ ամեն ջանք ի գործ էր դնում իր իշխանութիւնը երկրին մէջ հաստատելու համար։ Այնու հանդերձ այս վերջին նպատակը կարելի էր ի դերև ելնէր։

Մի և նոյն ժամանակ հաւանական է որ սուլթանին իշխանութիւնը վերջ ի վերջոյ Եգիպտոսից զգալապէս պիտի նուազի։

Աղէքսանդրիայի ռմբակոծութիւնը պ. Գլադստոնի կողմից Խալիֆի զօրութեանը դէմ ուղղուած մի հարուած էր։

Անգլիական յովազաուիւծը որ ի քուն կարծվում էր, յանկարծ զարթնեց և ասեց սուլթանին «կաց, աւելի հեռի մի դնար»։

Ներելի է կարծել որ Անգլիան արդէն ծանօթ էր սուլթանին Արաբիին հետ ունեցած յարաբերութեանց կապերին, նախ քան Բակիր բաշայի ձերբակալութիւնը որ այս խնդիրը կատարելապէս լուսաբանեց։

Այսուհետև անգլիացիք ստիպված են Բ. Դրան դէմ խիստ նախազգուշութիւններով վարուելու, որովհետև Դուռը ամեն հնար և միջոցների զիմելու կաչխատի, եթէ ոչ յայտնապէս, գէթ քողարկեալ կերպով Արաբին և իր մեղսակիցները չը մերկացնելու, ինչպէս արած էր Ալի-Բէն-խալիֆի համար։

Սուլթանը այս բանը միայն Սիրիայից կարող էր սկսել, որովհետև Անգլիան Կարմիր ծովը բռնած, և հետևաբար Արաբիայի և Եգիպտոսի միջև ամեն հաղորդակցութիւն արգելած է։ Տրիպոլիսն էլ ոչ մի կերպով զինտատոր Արաբիին չէ կարող օգնութեան հասնիլ, թէպէտ և քարավանների համար Բէնկազիից մինչև բարձր Եգիպտոս գնացող մի ճանապարհ կայ, այս ճանապարհին անջրպետը շատ երկար է վաչկատուն ցեղերի ճանապարհորդութեան համար։ Մնում է Սիրիան որ աւելի մօտ է Եգիպտոսին և ուր կայ մի ճանապարհ կաղա անունով, որտեղից բաղմաթիւ քարավաններ անց են կենում և այս ճանապարհը կատարելապէս ծանօթ է սիրիացւոց և եգիպտացւոց։ Այս այն ճանապարհն է որ Մէհմէդ Ալիի զօրաց բանակը անցկացաւ Սիրիան նուաճած ժամանակը։

Ամենասաստիկ մի հսկողութիւն անհրաժեշտ հարկաւոր է անգլիացւոց այս կէտին վրա, որովհետև Արաբին ամեն տեսակ օգնութիւն կարող է այս ճանապարհից սպասել։

Երբ Սաիդ բաշան, որ մի քանի ամիս առաջ պաշտօնանկ եղած էր, և վերստին նախկին պաշտօնին հրաւիրուեցաւ սուլթանի կողմից, սրան իսկական պատճառը, արտաքին քաղաքականութեան մէջ չէյխերին և ներքինիներին միջամտութիւնն էր։ Կ. Պոլսում երկար ժամանակ իրրև առասպել պիտի յիշուի այն մրցամարտը զոր ունեցան մեծ վէզիր Սաիդ և սուլթանի առաջին ներքինին, որոյ պատճառաւ վտանգի ենթարկուեցան, ընթերցողք կը յիշեն անշուշտ, շատ թուրք լրագրագիներ և անգլիական մեծ լրագրի մի թղթակիցը։

Սաիդը իր սեամորթ հակառակորդից յաղթուեցաւ, նոյնպէս ընկճուեցաւ պալատի դաւադրութիւնից որ Եգիպտոսում համիսլամական մանուածոյ քաղաքականութիւն բանեցնելու համար լարուած էր։ Սուլթանը, Սաիդին վերստին պաշտօնի կոչելուն նպատակը այն է որ զինքը վայրկենական տագնապից ազատէ, իսկ զալով այն կար-

ծիքին, որ սուլթանը երբ և իցէ կը հրաժարի նոյն իսկ գահը բարձրացած օրից ի վեր մտքումը դրած համիսլամական քաղաքականութիւնից, դա երևակայութիւն է և բնաւ չէ կարելի վստահել։

Այս քաղաքականութիւնը, ինչպէս ուրիշ անգամ էլ խօսելու առիթը ունեցել ենք, գլխաւորապէս նիւթուած է Ֆրանսիայի և Անդղիայի դէմ որոնք ոչինչ չը պիտի խնայեն այդ նպատակի դէմ մարտնչելու համար։

Այսօր Տաճկաստանը ուզում է Եգիպտոսում միջամտել, որովհետև յետ ռմբակոծութեան և պաշարման Աղէքսանդրիայի սուլթանը կարող էր ասել մահմետականաց «Եթէ Եգիպտոսում միջամտում եմ Արաբին և Եգիպտոսը անդղիացւոց ձեռքէն ազատելու համար է»

Բայց եթէ Անդղիոյ միջամտութիւնը Տաճկաստանի առիթ տայ որ նա ևս միջամտէ, այս տեսակ միջամտութիւն հանապազ վտանգալից է թէ մեզ և թէ անդղիացւոց համար, հետևաբար ինչ որ էլ պատահի, և որքան էլ մեզ թանգ նստի, հարկաւոր է թրքաց միջամտութիւնը արգելել յեղիպտոս։

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Ռէյտերի ընկերութեանը» Աղէքսանդրիայից հեռագրում են յուլիսի 14-ին։ Գերմանական արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնական սպասում են այստեղ շատ նշանաւոր հեռագրով։ Քաղաքի մէջ շարժումը աւելանում է. կենտրօնը, մեծ հրապարակը լցվում է. սրճարաններ են բացվում։ Անդլիական և եգիպտական պօլիցիան պարապած են փչացած ճանապարհները ուղղելով. այդ աշխատութիւնների համար գործ են դրվում տեղացիները։

—Լրագիրներին Պօրտ-Սաիդից հեռագրում են յուլիսի 14-ին։ Երէկ գերմանական հիւպատոսարանի շինութեան պաշտպանութեան համար «Möve» նաւից ափ իջան 25 մարդիկ։ Լէսէպս ժողով հրաւիրեց և յայտնեց, որ ինքն Արաբի-փաշայից խօսք ունի առած, որ նա չի ձեռք տայ Սուէզի ջրանցքին։

—«Ռէյտերի ընկերութեանը Աղէքսանդրիայից հեռագրում են յուլիսի 14-ին։ Այսօր առաւօտեան Բամլէում եղած անդլիական զօրքերի մէջ հանգստութիւն է տիրում. թշնամին չէ երևում։ Անդլիական զօրքերը ամրացնում են իրանց ամրութիւնները։ Լուր տարածվեցաւ, իբր թէ մի քանի զինուորներ կողոպտեցին Բամլէ պալատի մի մասը, այդ պատճառով գներալ Ալիսոն անձամբ գնաց քննութիւն անելու համար։ Այսօր նա խէդիվին մի զեկուցում ներկայացրեց, որի մէջ հաստատացնում է, թէ կողոպտումը կատարվել է պալատական ծառաների և բեդուինների ձեռքով։

—Լրագիրներին հեռագրում են յուլիսի 14-ին, որ համայնքների ժողովը շարունակում էր վիճաբանութիւնները կրէդիտի մասին. Զիլդերս պատասխանեց լորդ Կէմբրէլին, որ անհիմն է այն լուրը, իբր թէ անդլիական զինուորները կողոպտեցին Բամլէ պալատը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶԱԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յուլիսի։ Տպագրական գործերի կառավարիչ իշխան Վեազիմսկի սենատօր է նշանակված։ Զինուորական գիմնազիաները վերակազմված են կօրպուսների, գիմնազիաները կադետներ կանուանվեն։ Սուէզը գրաւված է անգլիացիներից։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յուլիսի։ „Правит. Вѣстн. լրագիրը հաղորդում է, որ Պրէօբրաժենսկի գունդի ուստեր-օֆիցեր Վալենտին Մուրավէօվին թոյլ է տուած ընդունել կոմս Մուրավէօվ-Ամուրսկու տիտղոսը։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ „Բագոզին“ ընկերութեան դեֆիցիտը հասնում է 900,000 ռուբլու։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ երէկ պրօկուրօր Գօնչարօվ զեկուցումն տուեց թագաւոր կայսրին կուկուեվի մօտ կատարված փորուածների մասին և յայտնեց որ կուրսկեան երկաթուղու վարչութիւնը վճռել է վնասվածներին հատուցումն տալ առանց դատաստանի, հէնց որ վնասների չափը կորոշվի։ Ուսանողների քննութիւնները ենթադրված է կատարել մասնաժողովների մէջ գրաւոր, բերանացի և փորձնական առարկաներից։ Նախագիծներ կազմվում են մինիստրութեան մէջ։ Օգոստոսի 6-ից մոցնվում է առանձին տարիֆ երկաթուղիներով աղ անցկացնելու համար։ „Новости“ լրագիրը լսել է, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը վճռել է միջնակարգ ուսումնարանների ընդունելութեան և արձակման քննութիւնների ժամանակ ֆոտոգրաֆիական պատկերներ պահանջել քննվողներից։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ռ. 87 կ., երկրորդ 90 ռ. 50 կ., երրորդ 90 ռ. 50½ կ., չորրորդ 90 ռ., հինգերորդ 90 ռ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 211 ռ. 62 կ., երկրորդ 210 ռ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ռ. 62 կ., երկրորդ 89 ռ. 50կ., երրորդ 89 ռ. 50 կ., ոսկի 8 ռ. 22 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,06 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա տուն արժէ 205 մարկ 75 պֆ., փարիզի վրա արժէ 252 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26-ին յուլիսի։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ կարգադրութիւն եղաւ Չէրնօմօրեան սահմանական պահապան զօրք նշանակելու մասին։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

КЁЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.
10—50

ԾՈՒՌԸ ԿԱՐԱՍԻՒՒԻ ՄԻԱԿ գործարան ամբողջ Ռուսաստանի մէջ։

ՎՕՅՑԵԽՕՎ անունով իր արդիւնաբերութեան առարկաների ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ քանակութեամբ գնողներից յանձնեց Ի. Ի. ՄԵԴԻՆՍԿՈՒՆ (И. И. МЕДЫНСКОМУ), որ բնակվում է Թիֆլիսի մէջ Նիկոլաևսկայա փողոցի վրա տուն կապանաձէի № 63։ Պատուէրները ընդունում է իր տան մէջ երեկոյեան 3—7 ժամը։

1—1

ԹԷՅ առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ։ Այդ թէյից **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ։ Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ռ.—1 ռ. 20 կոպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ռ. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ռ. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ. 50 կ., գեղեցիկ ԿԱՑՍԱՈՒ թէյ 1 ռ. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ռ. մաքուր թէյ առանց թղթի։ Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօկոլադ ֆրայ, Շեվիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԴԱՈՒ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ վեբլի, ԹԱՄԲԵՐ բարներբի, կոլմանի նշշշտայ, ԱԼԲՕՄՆԵՐ Շեվարցի կէս գնով։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՅՈՒՄ** № 156, 157, 158, 159 և 100։

9—100

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսումն է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ ալգեբրական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ։

Պայմանները կարելի է առաջարկել հետևեալ հասցէով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ նախապատրաստութիւնները հոգացող կարգադրիչ ցանձնաժողովը խնդրում է այն պարոններին, որոնք որ և է **ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** ցանկանում են ստանալ **ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ** կամ հաղորդել նորան, որ բարեհաձեն **ՇՆՈՐՀ ԲԵՐԵԼ** նրա **ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԻԻ ՄԷՋ** № 170։ Գրասենեակը բաց է **ԱՄԵՆ ՕՐ** առաւօտեան 9 ժամից մինչև 11 ժամը։

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
БРОШЮРА
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մօզդօկի երկսեռ հայոց դպրոցները որոնում են ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ, մէկը հայոց լեզուի և ձայնագրութեան և մէկը ռուսաց լեզուի, թուաբանութեան և աշխարհագրութեան և ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ ռուսաց լեզուի, թուաբանութեան և ձեռագործութեան։ Շաբաթական 20—24 դասերով, տարեկան 500 ռ., բնակարան, վառելափայտ, ջուր և ծառայ։ Ցանկացողները պէտք է դիմեն ուղղակի հոգաբարձութեանը։

2—3

JOURNAL D'ORIENT
HEBDOMADAIRE
Paraissant a VIENNE (Autriche)
ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles
6 mois. . . 4 —
S'adresser à F. Salles, avocat
1. Neuermarkt 9. (Vienne)
Sans ajouter le titre du journal.

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՑԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անդլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ռ., չամադաններ 250—25 ռ., սակվոյաժներ 1. 30—12 ռ., սուն դուկներ ճանապարհի 6—35 ռ., մարաններ (погребцы) 6—25 ռ., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուումիվալնիկներ մրամօրնի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լուլանի 6—32 ռ., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ռ., պատրոններ. (գուլաններ) րէվոլվէրի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլզի պապիրօզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էյնէմի. կօֆէ էյնէմի և Միխելսօնի. Պետերբուրգու 40—1 ռ. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ռ., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժինը. գրչակոթներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ռ., դանակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր. միս կտրելու մուշինայ. Անդլիական ուլթոներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօբկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիէներ, դդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չուտիչկէք 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵՋԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆէլչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՒՌԱՑԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) Միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

100—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Іюля 1882 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул., д. каз.